ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Փամբակ համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Փամբակ	Ավագանու արտահերթ նիստ	03.03.2023թ.	11:00	**Փամբակի** համայնքապետարան ավագանու նստավայր (գ. Փամբակ, 1 փող. 23)

ՕՐԱԿԱՐԳ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 03.03.2023Թ. ԱՐՏԱՀԵՐԹ

ԹԻՎ 04 ՆԻՍՏԻ

«03» Մարտի 2023թ. <u>ժամը՝ 11.00</u>

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

3. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

4. «ԱՍՍԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեություններին նախնական համաձայնություն տալու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

ՆԱԽԱԳԻԾ 24-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2023Թ-Ի ՄԱՐՏԻ 03-Ի ԹԻՎ
04 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի և 17-րդ հոդվածի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի մարտի 03-ի թիվ 04 արտահերթ նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

«03» մարտի 2023թ-ի թիվ 04 արտահերթ նիստ

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
3. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
4. «ԱՍՍԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեություններին նախնական համաձայնություն տալու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 25-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ
ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ԱՐՏԱԿ ՕՀԱՆՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ և 72-րդ հոդվածներով, հաշվի առնելով Սասուն Վլադիմիրի Մարդյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Սասուն Վլադիմիրի Մարանդյանի կողմից վարձակալած Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0243-0019 կադաստրային ծածկագրով, 0.3496 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը գնման նախապատվությամբ, ուղղակի վաճառքով օտարելուն:

2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՐՏԱԿ ՕՀԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 26-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ
ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ԱՐՏԱԿ ՕՀԱՆՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ և 72-րդ հոդվածներով, հաշվի առնելով Հասմիկ Բաբկենի Շահվելյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Տալ համաձայնություն Հասմիկ Բաբկենի Շահվելյանի կողմից վարձակալած Փամբակ համայնքի Քարաբերդ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-108-0113-0002 կադաստրային ծածկագրով, 2.41847 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը գնման նախապատվությամբ, ուղղակի վաճառքով օտարելուն:

2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՐՏԱԿ ՕՀԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 27-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ԱՐՏԱԿ ՕՀԱՆՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 22.02.2023թ. թիվ 21 դրական եզրակացությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Փամբակ համայնքի Վահագնի գյուղի վարչական սահմաններում գտնվող, «ԱՍՏՂԻԿ» բարեգործական ՀՄԴ-ին սեփականություն իրավունքով պատկանող 06-103-0072-0026 կադաստրային ծածկագրով 0,264324 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ հաշմանդամների վերականգնողական և ուսուցման կենտրոն կառուցելու նպատակով:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՐՏԱԿ ՕՀԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 28-Ա

«ԱՍՍԱԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 42–րդ կետի և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով «ԱՍՍԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2022 թվականի դեկետմբերի 6-ի գրությունը Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ նախնական համաձայնություն «ԱՍՍԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեությանը՝ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգում (ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայր /կենտրոնական տեղամաս/)՝ համաձայն գրությանը կից ներկայացված նկարագրության:

2. Տալ նախնական համաձայնություն «ԱՍՍԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեությանը՝ Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն (ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի կենտրոնական տեղամասի արևելյան և հարավային թևերում)՝ համաձայն գրությանը կից ներկայացված նկարագրության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
« ԱՍՍԱԹ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(«Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգում (ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայր /կենտրոնական տեղամաս)

«ԱՍՍԱԹ» ՍՊԸ
պետական գրացման համար՝ 77.110.00569
գրանցման ամսաթիվ՝ 22.04.1999թ.
գտնվելու վայրը՝ ՀՀ , Արարատի մարզ, գ. Դարակերտ

Հանքավայրի և օգտակար հանածոյի երկրաբանական բնութագիրը

Քարաբերդի հանքավայրը տեղակայված է Բազում-Մեղրուտ-Լերմոնտովո անտիկլինալային ծալքի առանցքային մասում, որի միջուկը կազմված է Շիրակի շերտախմբի տուֆաավազաքարերով, տուֆիտներով, պլագիոկլազային պորֆիրիտներով և տուֆափշրաքարերով, իսկ թևերը ներկայացված են Բազումի շերտախմբի պորֆիրիտներով և տուֆափշրաքարերով: Քարաբերդի հանքավայրը պատկանում է փոքր խորությունների թույլ սուլֆիդային քվարց-բազմամետաղային ֆորմացիային, հետախուզված հանքային մարմիններում հանքայնացման բնույթը երակիկացանային է:

Հանքայնացումը ներկայացված է պիրիտով, խալկոպիրիտով, սֆալերիտով, գալենիտով, բնածին ոսկով, խունացած հանքանյութով, հեմատիտով, մագնետիտով, պիրոլյուգիտով, պսիլոմելանով, երակային միներալներից առկա են քվարցը, կալցիտը, բարիտը և ռոդոխրոզիտը:

Հանքավայրի Կենտրոնական տեղամասի մշակման գործող նախագծով և պայմանագրով նախատեսվում է N1 և N3 հանքային մարմինները մշակել 2 փուլով- վերին հորիզոնները մշակել բաց լեռնային աշխատանքներով, իսկ դրանից հետո մնացած ստորին մասերը- ստորգետնյա լեռնային աշխատանքներով:

I Փուլով նախատեսված բացհանքով արդյունահանումը նախատեսվել է 3 տարի, որի ծավալները կիրացվեն մինչև 2024թ. հունիսի 6-ը՝ մինչև գործող թիվ Պ-366 (կնքված 06.06.2013թ.) պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:

II Փուլով նախատեսված ստորգետնյա հանքով կմշակվի 239081.9տ պաշարները: Ստորգետնյա հանքի տարեկան արտադրողականությունը կազմում է 29673.1տ-մարվող պաշար, 30000.0տ-ապրանքային հանքաքար: Մշակման տևողությունը կազմում է 7.8 տարի, որը արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգմամբ կընդգրկի 2024թ. հունիսից 2032թ. ընկած ժամանակահատվածը:

Հանքի շահագործման ժամանակացույցը

Քարաբերդի ոսկու հանքավայրի պաշարների հենքի վրա կառուցվող ստորգետնյա հանքի մշակումը ըստ սույն աշխատանքային նախագծի նախատեսվում է կատարել 30.0հազ.տ. ըստ ապրանքային հանքաքար տարեկան արտադրողականության դեպքում:

Ըստ աշխատանքային նախագծի հանքավայրի երկու հանքային մարմինների հանքաքարի պաշարների արդյունահանումը նախատեսվում է հաջորդաբար: Սկզբում շահագործվում է 1-ին հանքային մարմինը 1680մ հորիզոնից վերև: Այնուհետև շահագործվելու է 3-րդ հանքային մարմինը և ապա միայն, տեղամասային թեքատի

օգնությամբ՝ 1-ին հանքային մարմնի հանքաքարի պաշարները 1680մ-ից մինչև 1660մ հորիզոնը:

Ստորգետնյա հանքի 30.0հազ.տ. ըստ ապրանքային հանքաքար տարեկան արտադրողականության դեպքում հանքաքարում մետաղների պարունակությունները կկազմեն՝

	Ոսկի (Au)	Արծաթ (Ag)
1- ին տարի	4.1	7.2
2-րդ տարի	4.15	6.8
3-րդ տարի	3.5	6.5
4-րդ տարի	3.4	8.5
5-րդ տարի	3.5	8.0

Հանքի համալիր փոշեզերծման միջոցառումները

Ստորգետնյա հանքի համալիր փոշեզերծման համար սույն աշխատանքային նախագծով նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնցից կարելի է նշել.

- պայթանցքերի հորատումը նախատեսվում է ջրի մատուցմամբ, որով փոքրանում է օդի մեջ ''կախված'' փոշու քանակը: Ջրի ծախսը պայթանցքերի հորատման ժամանակ կազմում է 5լ/րոպե-ձեռքի հորատման մուրճով և 7լ-տելեսկոպային հորատման մուրճով հորատման ժամանակ:
- լեռնային զանգվածի բարձման ժամանակ նախատեսվում է նրա խոնավացումը 4-10% սահմաններում:
- աշխատանքային գոտիներում և օդափոխության թարմ շիթի ուղիներում նախատեսվում է փորվածքների պատերի պարբերաբար լվացումը փոշուց:
- պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ ապահովվում է ջրափոշեզերծումը ջրային մառախուղերով, որով լցվում են փորվածքները անմիջապես պայթեցումից առաջ: Մառախուղ առաջացնող ջրաշիթը պայթեցումից առաջ ուղղվում է պայթեցման ալիքի շարժմանն ընդառաջ:

Այս և մի շարք այլ միջոցառումների իրականացման շնորհիվ կապահովվեն առավել վտանգավոր նյութերի սահմանային թույլատրելի խտությունները (ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 7-ի N160-Ն որոշում):

Ջրամատակարարում և ջրհեռացում

Ստորգետնյա հանքի սույն նախագծով հանքի և նրա արտադրական հրապարակի ջրամատակարարումը նախատեսվում է ապահովել ցիստեռներով, բերովի ջրով: Այն բերվում է ԿՕ-002 ջրցան-լվացող մեքենայով՝ պայմանագրային հիմունքներով:

Ջրի ծախսը կազմում է՝

խմելու ջուր – 2.55 մ3/օր;

տեխնիկական ջուր – 12.6 մ3/օր;

Ջրհեռացումը ստորգետնյա հանքից կատարվում է՝

- թիվ 3 բովանցքի հորիզոնից (1680մ) վերև-ինքնահոս կերպով, առկա և լայնացվող բովանցքով: Ջրի ընդհանուր ելքը ըստ երկրաբանական հաշվետվության տվյալների կազմում է 1.3լ/վրկ;
- թիվ 3 բովանցքի հորիզոնից ներքև - 1660մ հորիզոնում տեղադրվող պոմպերի միջոցով;

Ջրերի հոսքը ստորգետնյա հանքում 1660մ հորիզոնում կազմելու է 1.6լ/վրկ կամ 5.8մ3/ժամ:

Ելնելով ստորգետնյա ջրերի ելքից և ջրի մղման բարձրությունից (35մ) կարող են կիրառվել (շահագործման 7-րդ տարում) 3.0մ3/ժամ արտադրողականությամբ կենտրոնախույս պոմպեր:

Անվտանգության սանիտարիան և արտադրական գեղագիտությունը

Ստորգետնյա հանքի արտադրական հրապարակում ստեղծվելու է վարչա-կենցաղային համալիր, որը ապահովելու է հետևյալ սանիտարա-հիգիենիկ և պրոֆիլակտիկ գործողությունները՝

- հատուկ հագուստի փոշեզերծում, լվացում և չորացում;
- ցնցուղի ընդունում;
- բանվորներին գազավորված ջրի և մանրէազերծված ամանեղենի մատակարարում;
- բանվորներին հակափոշու շնչազտոցներով, գլխին ամրացվող լուսատուներով, ինքնափրկիչներով մատակարարումը և այլն:

Ստորգետնյա հանքի արտադրական հրապարակը նախատեսվում է կանաչապատել, ճանապարհները պահել բարեկարգ վիճակում:

Ստորգետնյա լեռնային փորվածքներում նախատեսված են թույլատրելի սահմանային խտության բերելու համար լայն միջոցառումների համալիր: Աշխատանքային հորիզոնում (1680մ, թիվ 3 բովանցք) կահավորվում է զուգարան, որը մշտապես պետք է գտնվի ասենիզատորի հսկողության տակ:

Խուցային փորվածքները (ՊՆ-ի ծախսային պահեստ, ենթակայան, հակահրդեհային միջոցների պահեստ և այլն) ներկվում են կրաներկով, հանգիստ, բաց գույներով և այլն:

Նախատեսվում է նաև արտադրական հրապարակի և նրան մոտեցող ավտոճանապարհների լուսավորումը և այլն:

Անվտանգության տեխնիկա

Աշխատանքային նախագծով բոլոր տեսակի ստորգետնյա լեռնային աշխատանքների կատարումը նախատեսվում է անվտանգության միասնական կանոնների (ԱՄԿ) պահանջներին լրիվ համապատասխան:

Այդ պահանջներից անհրաժեշտ է նշել՝

- Բոլոր աշխատողները, որոնք ընդունվում են հանքում աշխատանքի կամ տեղափոխվում են մեկ մասնագիտությունից մեկ այլ մասնագիտությամբ աշխատելու, պետք է անցնեն անվտանգության տեխնիկայի նախնական ուսուցում, իսկ ստորգետնյա հանք ուղարկվողները պետք է սովորեն ինքնափրկիչների և հրդեհամարման առաջնային միջոցների օգտագործումը: Նախնական ուսուցման տևողությունը սահմանվում է այն բանվորների համար, որոնք ընդունվում են ստորգետնյա աշխատանքի և նախկինում հանքում չեն աշխատել – 10օր, եթե

նակինում աշխատել են -5օր, մեկ մասնագիտությունից մեկ այլ մասնագիտության տեղափոխվելիս – 2օր: Մակերևույթում աշխատանքի ընդունվածների համար սահմանվում է. եթե նախկինում հանքում չեն աշխատել – 3օր, աշխատած լինելու դեպքում -1օր:

- Մաքրման և նախապատրաստական աշխատանքներում աշխատող բանվորները պետք է սովորեն աշխատանքի կազմակերպմամբ նախատեսված բոլոր աշխատանքների կատարումը, քանի որ հանքում ընդունված է արտադրական պրոցեսների համատեղման սկզբունքը:
- Բոլոր բանվորները, ոչ ուշ քան տարին 2 անգամ անպայման պետք է անցնեն անվտանգության տեխնիկայի գծով կրկնակի հրահանգավորում: Առաջնային և կրկնվող հրահանգավորման արդյունքները գրանցվում են հատուկ քարտում:
- Ստորգետնյա փորվածքներում և մակերևույթում տեխնիկական ղեկավարման իրավունք է տրվում լեռնատեխնիկական կրթություն ունեցող անձանց:
- Թիվ 3 բովանցքում շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նրա վիճակը պետք է ստուգվի լեռնափրկարար ծառայությունների կողմից և պետք է ստացվի նրանց թույլտվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԱՍՍԱԹ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն (ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի արևելյան և հարավային թևերում)**)**

«ԱՍՍԱԹ» ՍՊԸ
պետական գրացման համար՝ 77.110.00569
գրանցման ամսաթիվ՝ 22.04.1999թ.
գտնվելու վայրը՝ ՀՀ , Արարատի մարզ, գ. Դարակերտ

Ընդհանուր տեղեկատվություն

Նախատեսվում է երկրաբանական աշխատանքների իրականացմամբ հանքավայրի Կենտրոնական տեղամասի արևելյան և հարավային թևերում կատարել լրացուցիչ հետախուզական աշխատանքներ, որոնց արդյունքների հիման վրա կտրվի Քարաբերդի հանքավայրի արևելյան և հարավային տեղամասերի երկրաբանատնտեսական գնահատականը:

Քարաբերդի հանքային դաշտի երկրաբանական կառուցվածքը

Քարաբերդի հանքային դաշտի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են մինչ վերին կավճի անդեզիտները, անդեզիտ-դիորիտները, բազալտները, քվարցային պորֆիրները, միջին էոցենի հրաբխանստվածքային ապարները պորֆիրիտներ, տուֆֆիտներ, տուֆաավազաքարեր, տուֆափշրաքարեր, հրաբխային քվարցային պորֆիրներ և հիդրոթերմալ փոփոխված ապարներ):

Հանքային դաշտը տեղադրված է Բազում- Մեղրուտ-Լերմոնտովո անտիկլինային ծալքի մերձ-առանցքային մասում, որն ունի հյուսիս-արևմտյան տարածում և 55-650 անկյուններով անկման թևեր: Միջին էոցենի վերին մասի տուֆածին ապարները նստած են անտիկլինալ ծալքի հարավ-արևմտյան թևում և ունեն դեպի հարավ-արևմուտք 45-550 անկյուններով անկում:

Դրանք ներկայացված են տուֆաավազաքարերով, տուֆֆիտներով, տուֆափշրաքարերով, ավգիտային և անդեզիտային պորֆիրիտներով:

Տուֆաավազաքարերը, տուֆֆիտները մակրոսկոպիկ ամուր նրբա- և միջնահատիկ մուգ մոխրագույն և մոխրագույն ապարներ են, որոնք հերթագայում են մեկը մյուսին: Պորֆիրիտները մոխրագույն, կանաչամոխրագույն միջահատիկ են ապարներ են, նստած են քվարցային պորֆիրների վրա, նեղ գոտիով մինչև 8.0կմ երկրարությամբ ձգվում են անտիկլինալի առանքի երկայնքով և ունեն ոչ հարթ, խորդուբորդ կոնտակտներ պորֆիրիտների և հիդրոթերմալ փոփոխված առաջացումների հետ: Քվարցային պորֆիրների հզորությունը ըստ տարածման հաստատուն չէ և տատանվում է 10մ-ից մինչև 100մ:

Անտիկլինալի միջուկը և հյուսիս-արևելյան թևը ծածկում են միջին էոցենի ստորին մասի ապարները: Դրանք ներկայացված են պլագիոկլազային պորֆիրիտներով, տուֆաավազաքարերով կամ պորֆիրիտների տուֆափշրաքարերով:

Մակրոսկոպիկ պորֆիրիտները մոխրագույն, կանաչամոխրագույն ապարներ են. սպիտակ դաշտային սպաթի և մուգ գույնի բաղադրիչների պարզ արտահայտված անջատումներով:

Տուֆաավազաքարերը և պորֆիրիտների տուֆափշրաքարերը մակրոսկոպիկ կանաչամոխրագույն ապարներ են պորֆիրիտների բեկորներով ¥ քսենոլիտներով): Այդ ապարները աստիճանաբար մեկը մյուսին են անցնում:

Հիդրոթերմալ փոփոխված ապարների գոտիները ունեն տարածման մեծ մակերես: Դրանք երկու ճյուղով ձգվում են անտիկլինալի առանցքային մասի երկայնքով, շառնիրային գծի երկու կողմերից 100-500մ հեռավորության վրա: Հիդրոթերմալ փոփոխված ապարների առաջին գոտին սկսվում է Փամբակ գետի աջ ափից և ձգվում է Փամբակ կայարանի թուներով, Մեղրոտի և Քարաբերդի հանքավայրերով դեպի արևմուտք, հյուսիս-արևմուտք: Գոտու հզորությունը հաստատուն չէ, թևերում կազմում են մոտ 100-150մ, կենտրոնում աստիճանաբար մեծանալով Քարաբերդի հանքավայրի շրջանում հասնում է մինչև 1.0կմ:

Գոտում ապարները խիստ ճմլված են, տեղ-տեղ քվարցացված, սերիցիտացված և կաոլինացված: Երբեմն ապարները այնքան խորն են փոփոխված, որ լիովին վերածվել են երկրորդային քվարցիտների, տեղ-տեղ պահպանելով առաջնային ապարների տեքստուրաները:

Երբեմն երկրորդային քվարցիտները դժվարությամբ ենթարկվելով հողմնահարման ¥հարավային սահմանի գոտի), առաջացնում են առանձնացված զանգվածներ, որոնք շրջապատող ռելեֆի վրա ներկայացված են կտրուկ եզրագծերով: Գոտում նկատվում են տիպիկ տեկտոնական փշրաքարեր, որոնք մեծամասամբ ներկայացված են պորֆիրիտների և տուֆածին ապարների բեկորներով ցեմենտացված տեկտոնական կավերով, այն համընկնում է Մայմեխ-Տանձուտի խախտման հյուսիս արևմտյան ճյուղի հետ: Հիմնական գոտում հանդիպում են բազմաթիվ ուղեկից՝ հարավ-արևմտյան ուղղություններով տարածվող տեկտոնական ճեղքեր: Մի քանի այդպիսի ճեղքեր անցնում են Քարաբերդի հանքավայրով և համարվում են հանքաբեր երակներ հանքայնացման տեղադրման համար:

Հիդրոթերմալ փոփոխված ապարների երկրորդ գոտին գտնվում է առաջինից 600մ-ից մինչև 1.0կմ դեպի հյուսիս: Այն անկում է դեպի հյուսիս արևելք 30-500 անկյան տակ: Գոտու հզորությունը հաստատուն չէ և տատանվում է 150մ-1.0կմ ¥ փքված տեղերում): Երկրորդ գոտին առաջինից տարբերվում է նրանով, որ այստեղ երկրորդային քվարցիտները համարյա բացակայում են: Այդ գոտու առանցքում է գտնվում Փամբակի պղինձ- բազմամետաղային երևակումը:

Հիդրոթերմալ փոփոխված ապարների երկրորդ գոտին համընկնում է Մայմեխ-Տանձուտի խախտման հյուսիս-արևելյան ճյուղավորման հետ:

Անտիկլինալ ծալքի միջուկում տեղադրված ապարները հիմնականում խիստ ճեղքավորված են, տեղ-տեղ ջարդոտված և խճավազի վերածված, քլորիտացված, ճեղքերով կարբոնատացված օքրայացված:

Նախատեսվող գործունեության հակիրճ բնութագիրը

Կենտրոնական տեղամասի արևելյան թևում՝ թիվ Լ-366 լեռնահատկացման սահմաններից դուրս, շարունակվում է պաշարները հաշվարկված և ԱՍՍԱԹ ՍՊԸ կողմից արդյունահանվող թիվ 1 հանքային մարմնի հիմնական մասը և ճյուղավորումները, որոնց ուսումնասիրությունը առաջնահերթ խնդիրներից մեկն է:

Հարավային թևում շարունակվում է թիվ 3 հանքային մարմինը (նույնպես շահագործվող) իր բազմաթիվ ճյուղվորումներով, որոնք ևս ենթակա են ուսումնասիրման՝ Կենտրոնական տեղամասի պաշարների վերաբերյալ լիարժեք պատկերացում կազմելու և նոր պաշարներ շահագործման մեջ ընդգրկելու համար:

Ընկերության կողմից տվյալ տարածքներում նախատեսվում է կատարել.

- երկրաֆիզիկական աշխատանքներ տարբեր մեթոդների կիրառմամբ,
- երկրաքիմիական նմուշարկում և հետազոտություններ,
- մակերեսային բնական և արհեստական մերկացումների նմուշարկում,
- մինչև 100մ խորությամբ հետախուզական հորատանցքերի անցում և նմուշարկում,
- լաբորատոր և գործարանային պայմաններում հումքի տեխնոլոգիական հատկությունների փորձարկումներ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների տարածքն ընդգրկում է 54.12հա տարածք, որը ներկայացված է հիմնականում արոտավայրերով:

Կենտրոնական տեղամասի պայմանական տարածքից որոշակի մակերեսներ, որտեղ չկան նախնական տվյալներ հանքայնացման վերաբերյալ, ընդգրկվել են որպես հեռանկարային տարածքներ և այդտեղ նախատեսվում է իրականացնել համալիր երկրաֆիզիկական աշխատանքներ և պարզաբանել հնարավոր տարածական կապը հարակից տեղամասերի հանքայնացումների միջև:

Աշխատանքների ավարտին տեղամասում կկատարվի 1:2000 մասշտաբի տեղագրական հանույթ՝ բոլոր փորվածքների կապակցմամբ:

Հանքամարմինների կապակցման հավաստիությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է երկրաֆիզիկական մի քանի մեթոդների կիրառմամբ ուսումնասիրություններ: Համալիրի մեջ կարող են մտնել էլեկտրահետախուզության՝ *«Բնական էլեկտրական դաշտի»* մեթոդը, *էլեկտրապրոֆիլացման մեթոդի* «Կոմբինացված» և «Միջին գրադիենտի» մոդիֆիկացիաները, «Լիցքի մեթոդը», «Մագնիսա-հետախուզությունը»:

Հայցվող տարածքում նախատեսվում է երկրաքիմիական նմուշարկման աշխատանքներ՝ 1:2000 մասշտաբի հետախուզական ցանցին համապատասխան:

Ակոսային նմուշարկումը հանդիսանում է լեռնային փորվածքների հիմնական նմուշարկման ձևը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանքայնացումն անհամաչափ է, ակոսային նմուշի ակոսն ընդունվում է 10×5 սմ (լայնք × խորություն): Փորվածքներում ակոսի երկարությունը որոշվում է հանքայնացման հզորությունից: Հիդրոթերմալ փոփոխված ապարների հզոր գոտիներում ակոսի միջին երկարությունը նախատեսվում է 1-2մ: Ակոսային նմուշարկման կենթարկվեն արհեստական (ճանապարհներ) և բնական մերկացումները, ինչպես նաև նախկինում անցած հետախուզաառուները:

Մակերեսային նմուշարկման աշխատանքները կատարելուց հետո, հանքայնացման բնույթը հանքային մարմինների խորքում հետախուզման, ինչպես նաև ըստ անկման ուղղության հանքայնացման հայտնաբերման և հետապնդման նպատակով նախատեսվում է մեխ.սյունակային հորատանցքերի հորատում:

Նախատեսվող հորատման աշխատանքների ընդհանուր ծավալը կկազմի մոտ 1000 գծ.մ, շուրջ 10-15 հորատանցք:

Դաշտային աշխատանքների կատարման համար նախատեսվում է օգտագործել գոյություն ունեցող ավտոճանապարհները:

Ընդերքի և շրջակա միջավայրի պահպանություն

Նախատեսվում է երկրաբանահետախուզական աշխատանքներն իրականացնել «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Ընդերքի օգտագործման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ընդերքի պահպանության համար սահմանված նորմերն ու կանոնները:

Երկրաբանական ուսումնասիրությունների համար ընդգրկվող տարածքի վրա բացակայում է անտառային գոտին և չկան բնակելի շինություններ: Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը նվազեցնելու համար նախատեսվում է ճանապարհների պարբերական ջրման աշխատանքներ: